Հաստատում եմ
2.IX.2022թ.

Ապարանի Վ. Եղիազարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց

Դասվարի աշխատանքային տարեկան ծրագիր

2022-2023 ուսումնական տարի

Դասվար՝ Ս. Մակարյան

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) I դասարանում սովորում են 26 աշակերտ: Հիմնականում աշակերտները ակտիվ են, բացակայությունները շատ քիչ են,հաճախում են դպրոց պատրաստված,հանձնարարված առաջադրանքները կատարած:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում՝

1. Աշակերտների ադապտացումը դպրոցական կյանքին
2. Ծանոթացնել օրվա ռեժիմին, կարգ ու կանոնի պահպանմանը:
3. Պարբերաբար հետևել աշակերտների անձնական հիգենային,զրույցներ տանել հիգենայի պահպանման մասին:
4. Ստեղծել դասարանական անկյուն՝ դասացուցակ, հերթապահության ցուցակ,դրոշ,զինանշան,օրիներգ
5. Ցերեկույթ նվիրված անկախությաբն օրվան
6. Ցերեկույթ նվիրված ուսուցչի օրվան
7. Հետևողական աշխատանք ետ մնացող աշակերտների հետ
8. ՈՒսուցիչ-աշակերտ,դպրոց-ընտանիք սերտ կապի ստեղծում
9. Ամանորյա դիմակահանդես
10. Բանակի օր:
11. Թումանյանական օրեր;
12. Մարտի 8
13. Ապրիլի 24

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Ծանոթացնել հայ ժողովրդի պատմությանը,նրա հերոսական էջերին, հայոց եկեղեցիների պատմությանը:Լ

Անցնել մշակույթի կենտրոններ,զրույց անցկացնել քրիստոնեության մասին:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Այցելություններ վայրեր թանգարաններ,պատկերասրահ,տեսարժան (Օշական,Մատենադարան,Տառերի պուրակ,Էրեբունի արգելոց-թանգարան):

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն Կազմակերպել հայրենասիրական արշավներ:Զրույցներ նվիրված հայրենիքին,Հայրենասիրությանը,հայրենիքի հերոս պաշտպաններին:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Կազմակերպել աշակերտների ֆիզիկական զարգացմանը և առողջության պահպանմանը նպաստող ակտիվ միջոցառումներ,մրցույթներ,էքսկուրսիաներ,արշավներ,էստաֆետային խաղեր,սպորտլանդիաներ:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Երեխաների մեջ դաստիարակել սեր և հոգատարություն աշխատանքի,աշխատատեղի,աշխատանքային գործիքների նկատմամբ:Կազմակերպել շաբաթօրյակներ,ծառատնկեր:Զրույցներ շրջապատի մաքրության կարևորության մասին:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Զրույցներ շրջապատի,շրջակա միջավայրի մաքրության պահպանման մասին:Զրույցներ « մարդը բնության բարեկամն է», «Պահպանենք և մաքուր պահենք մեր շրջապատը », «Հոգատար վերաբերմունք բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ »:

4. Դպրոց-ընտանիք կապը Ամրապնդել դպրոց-ընտանիք կապը:Պարբերաբար հրավիրել ծնողական ժողովներ:

Ծնողներին ներգրավել դասարանական աշխատանքների մեջ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	կատարող
	I կիսամյակ		
1	Եկեք ծանոթանանք (ընտրել դասարանի ավագ և սանիտար):	սեպտեմբեր	դասվար
2	Դասարանական անկյան ստեղծում(դասացուցակ,հերթապահության ցուցակ,դրոշ,զինանշան ,օրիներգ)	սեպտեմբեր	դասվար
3	Անկախության օր	սեպտեմբեր	դասվար, աշակերտներ
4	Թեմա « Համագործակցություն», « մեր բակի պատմությունը»,ընթերցում ու քննարկում	սեպտեմբեր	դասվար, աշակերտ

5	Դաս-միջոցառում « Շնորհավոր տոնդ ուսուցիչ»	հոկտեմբեր	դասվար, աշակերտ
6	Աշխատանք հետ մնացող աշակերտների հետ	հոկտեմբեր	դասվար
7	Զրույց « Ինչ է ընկերությունը » թեմայով	հոկտեմբեր	Դասվար, աշակերտ
8	Թեմա « Արդյունավետ հաղորդակցում », « Քուչոյի ծննդյան օրը » ընթերցում և քննարկում	նոյեմբեր	Դասվար, աշակերտ
9	«Ես բարեկիրթ եմ » թեմայով զրույց և քննարկում	նոյեմբեր	Դասվար, աշակերտ
10	Շաբաթօրյակ դասարանում	նոյեմբեր	Դասվար
11	Զրույց «Իմ տունը», «Իմ ընտանիքը » թեմայով:Դեկտեմբերի 7 զրույց:	դեկտեմբեր	Դասվար
12	Թեմա «Կոնֆլիկտներիհաղթահարում», «Արի հաշտվենք» ընթերցում և քննարկում	դեկտեմբեր	Դասվար, աշակերտ
13	Զրույց «Ձմեռ» թեմայով:Տոնածառի խաղալիքների պատրաստում:Նոր տարի	դեկտեմբեր	Դասվար, աշակերտ
	II կիսամյակ		
1	Զրույց հայոց բանակի կազմավորման մասին	հունվար	Դասվար
2	«Ում եմ ամենից շատ սիրում»թեմայով զրույց	հունվար	Դասվար, աշակերտ
3	«Լավ և վատ գործեր» պատմության ընթերցում և քննարկում	փետրվար	Դասվար, աշակերտ
4	Դասարանական շաբաթօրյակ	փետրվար	Դասվար, աշակերտ
5	Տեղեկություններ Հ. Թումանյանի մասին, ընթերցել Թումանյանի հեքիաթներից	փետրվար	Դասվար
6	«Դռները բա՛ցեք գարուն է գալիս»:Գարնան առաջին օր	մարտ	Դասվար, աշակերտ
7	«Ինչ նվիրել մայրիկին»:Տեղեկություն տոնի մասին «Մարտի 8 »: «Երգ մայրիկիս » երգի ուսուցում	մարտ	Դասվար, աշակերտ
8	Թեմա «Բանակցություններ», «Կախարդական ծրարը» պատմության ընթերցում և քննարկում	մարտ	Դասվար, աշակերտ
9	Տեղեկություններ Աթաբեկ Խնկոյանի մասին որպես մանկագիր:Ընթերցել «Խոզն ու ագռավը» առակը:	ապրիլ	Դասվար, աշակերտ
10	Ցերեկույթ նվիրված մայրության տոնին: «Իմ մայրիկը»	ապրիլ	Դասվար, աշակերտ
11	Թեմա «Շրջակա միջավայր » «Նվերը» պատմության ընթերցում ու քննարկում	ապրիլ	Դասվար, աշակերտ
12	Զրույց «Մեծ Եղեռն » թեմայով հիշատակի օր	ապրիլ	Դասվար, աշակերտ

13	«Քաջ Նազարը » հեքիաթի ընթերցում և քննարկում	մայիս	Դասվար, աշակերտ
14	«Ուրվական ենք փնտրում » պատմվածքի ընթերցում	մայիս	Դասվար
15	Դասարանական գրքերի նորոգում և համալրում նոր գրքերով		